Դանիել Վարուժան

Ականջներուն

Մարգարտածո՛ց ականջներ, գանգուրներուն տակ սիրուն,
Ամենանուրբ մասն եք դուք իմ նըրբագեղ մարմինին.
Լոկ դո՛ւք կըրնաք հաղորդել երգը քնարիս լարերուն
Իր ըսքողած հոգիին:

Թիթեռնիկի՞ կը նմանիք, թե՞ ծովամույն խեփորի՝
Որ խըմած է բուստին լույսն և նըվագներն անդունդին.
Ա՛յնքան փոքրիկ եք՝ որ տղեկ մ'իր ափին մեջ աղածրի
Պիտ' ամփոփե ձեզ դյուրին:

Ո՛վ բավիղներ նըրբակերտ, ո՛վ ոլորտներ վարդագույն՝
Որոնց մեջեն, չեչքարե մը վար թորող ջուրին նման,
Բոլոր ձայներն աշխարհի կ'հասնին մինչև իր հոգվույն
Եվ խորհուրդնե՛ր կը դառնան:

Ուշիմորեն կ'ամփոփեք ձեր ձագարին մեջ բյուրեղ
Անծանոթ խոսքը բոլոր դաշնակավոր իրերուն,
Հեռավոր երգն աստղերուն, որ անհունին մեջ լուսեղ
Կը ծովանա՛ փոփոդուն:

Եվ ձեր քունքին առընթեր բռնեմ ճըրագս աղամանդ
Աղավնյակի մը կարմիր սըրտին նըման բաբախուն,
Թափանցկությամբ մը վճիտ կը բըռընկի ձեր թաղանդ

Կակաչի պես հրմայուն:

Սրրտիս վրրա՛, ականջնե՛ր, խոնարհեցեք սրրտիս վրա՛.
Դեռ չերգրված կույս երգեր հոն կը բզզան անհամբեր՝
Ինչպես քրնքույշ և խրլրտուն բրժոժներուն մեջ ոսկյա
Լուսակարոտ թիթեռներ:

Եվ թողեք, զո՛ղտր ականջներ, ձեզ համբուրեմ զգայնոտ,
Տամուկ լեզվովրս հրպիմ խորշերը ձեր սատափյա,
Որ ան սարսռա անպատում հեշտանքներով ջրղայնոտ՝
Քրնարիս պես դյուրազգա:

Թո՛ւյլ տվեք ձեզ ողբերգեմ՝ Գեղեցկության դաշույնին
Բյուր հարվածներն հոգվույս մեջ, և զույգ մ'արցունք աչքերես
Տրրտմորեն վար կախեմ ձեր բրլթակներեն փափկագին՝
Իբրև օղեր՝ ընծա ձեզ: